պի միշտ և հանապազ առաջնութիւնն պահեալ և տուեալ է ազգին Ցունաց. նմին իրի յայտ առնեն Ցոյնք՝ թէ յաւուր Ս. Շաբաթու սակս վառելոյ զխուրն օրհնեալ՝ մոռանել ազգին Ցունաց և յետոյ անմիջապէս ազգին Հայոց։

2°. Ազգն Ասորւոց 'ի ժամանակէ հետէ գոլով ստորադրեալ ազգին Հայոց՝ մնասցեն յայսմհետէ եւս այնպէս, որպէս և էինն. իսկ երկոքին ազգքն Հապէշք և Գպտիք յորոց մասնէ էին և ընդ որում գտանէին 'ի հարիւր ամաց հետէ մինչեւ ցայսօր՝ ըստ նմին օրինակի մնասցեն եւս յայսմհետէ։

3°. Վասն վանաց Ս. Յակոբայ մեծի, և վասն այլոց տեղեաց որք յԵրուսաղէմ, զորս սեփհականեալ ունին այժմ Հայք 'ի ժառանգութեան իւրեանց, բայայայտ ծանուցանեն Ցոյնք չունել այսուհետեւ իրաւունս միջամտելոյ և պահանջելոյ ինչ։ Ցետ ընդունելոյ Հայոց զայս գիր խաղաղութեան և համաձայնութեան, զոր պահեսցեն առ իւրեանս։

Վասն ամենայն որ և իցէ պատճառաց, որպէս գրեցաք 'ի վեր անդր, ստորագրեալ կնքեցաւ այս թուղթ 'ի մէջ երկուց Պատրիարքաց Կոստանդինուպոլսի և Ս. Երուսաղէմի, և յայլոց իշխանաւորաց մերոց անեղծանելի և անվոխոխելի երդմամբ. տալով փոխադարձաբար զնոյն ստորագրութիւն Պատրիարքացն Հայոց, ընդ մեծամեծս ազգին իւրեանց։

Մխարանութեան գիրս գրեցաւ վասն խաղաղութեան և համաձայնութեան, և 'ի բաց բառնալոյ զինաւոր յիւրաքանչիւր ազգէ, 'ի հաճոյս բարերար կամաց Ծայրագոյն Դեսպանին եւ բարեպաշտ հրէշտակին Գաղղիոյ 'ի Դուռն Օսմանցւոց, որպէս պատմեաց և ազդ արար մեզ թէ վասն խռովութեանց մերոց, պատահի ինաւսուց ինքն եւ իւր ազգն Ֆրանկաց Ուստի հարկ է պահել զհամաձայնութիւն 'ի մէջ երց ազգաց, և եթէ հակառակ ինչ գրելոցս պատահեսցի, յայնժամ գրեալքս անընդունելի եղիցին. (1739 յ7 Ապրիլի)։

Սակս խնդրոյ Ս. Յակոբայ գրեալ էր Գրիգոր Պատրիարք թուղթ սիրոյ 'ի յարգանաց առ Կարտինալն Ֆլորի 'ի Փարիզ՝ խնդրելով 'ի նմանէ, զի 'ի ձեռն Արքայի ձեռնտու